

«ՆՈՐ ՀՈՐԻՋՈՆ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Անկախ աուդիտորի հաշվետվություն

Ֆինանսական հաշվետվություններ
2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված ժամանակաշրջանի
համար

Կազմակերպության ղեկավարության կազմը	3
Կազմակերպության ղեկավարության պատասխանատվությունը.....	4
Անկախ աուդիտորի հաշվետվությունը.....	5
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	6
Հաշվապահական հաշվեկշիռ.....	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն.....	9
Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ.....	10

Կազմակերպության ղեկավարության կազմը

Տվյալ ֆինանսական հաշվետվությունների ստորագրման պահին «ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ղեկավարության կազմը հետևյալն էր.

Կազմակերպության խորհուրդ

Գոռ Մովսեսյան
Արամ Փիրուզյան
Լիլյա Աբրահամյան

Կազմակերպության խորհրդի նախագահ
Խորհրդի անդամ
Խորհրդի անդամ

Գործադիր մարմին

Խորեն Բերոբյան
Մոնիկա Խաչատրյան

Գործադիր տնօրեն
Գլխավոր հաշվապահ

Կազմակերպության ղեկավարության պատասխանատվությունը

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար: Այդ նպատակով նրանցից պահանջվում է.

- ընտրել հաշվապահական հաշվառման քաղաքականություն և հետևողականորեն կիրառել այն,
- կատարել հիմնավորված գնահատումներ,
- պատրաստել ֆինանսական հաշվետվությունները Կազմակերպության գործունեության անընդհատության հիման վրա, եթե Կազմակերպության ղեկավարությունը մտադիր չէ կամ պատճառ չունի դիտարկելու Կազմակերպությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու հավանականությունը:

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար, որոնք արժանահավատորեն ներկայացնում են Կազմակերպության ֆինանսական վիճակը: Նրանք պատասխանատու են միջոցներ ձեռնարկել Կազմակերպության ակտիվների ապահովման, խարդախությունների և այլ անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ:

Երևան,
Երևան, 25 մայիսի 2007թ.

Խորեն Բերրբյան
Գործադիր տնօրեն

Մոնիկա Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված ժամանակաշրջանի համար ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի փայտերերին,

Մեր կողմից իրականացվել է «ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտված ինը ամիսների ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար պատասխանատվությունը կրում է Կազմակերպության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Հայաստանի Հանրապետության Աուդիտի ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Կազմակերպության ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Կազմակերպության 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված ինը ամիսների ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կանոնակարգող օրենսդրության համաձայն:

Հ. Բակլաչյան
ԱՌԻԳԻՏԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. Փինարբասի
ՏՆՕՐԵՆ -ԲԱԺՆԵՏԵՐ

Երևան, 25 մայիսի 2007թ.